

ԱՐԲԵՆՈՂ ՅԻՍՆԱՄԵԱԿ

Դանիել Վարուժանին եւ իր մտածումի եղ-
րայրներուն, նահատակութեան յիսնամեակի
առիթով. 1915-1965, Ապրիլ 11/24:

Թո՛ղ իտալիան իր Տանքէին կապիտալիոնն ընէ կոքող,
Շէյքըսպիրին փառքին վըկայ՝ Թո՛ղ Ալպիոնն ըլլայ արձան,
Ու Ֆլորանսան Թո՛ղ Պանթէոնէն իր Հիւկոյին կարդայ ներքող,
Դուն մեր շունչին, մեր արցունքին, երազին մէջ ես, Վարուժա՛ն:

Երգըդ՝ Յեղին Սիրտէն առած՝ աստուածօրէ՛ն մեզ մատուցիր,
Արշալոյսի նառագայքներն եղան քնարիդ լա՛ր այգագեղ,
Ներշնչումիդ գեղեցկութեան կաղապարին մէջ աստղածիր՝
Անմահութեան նախը՛նքն առին դիւցազներգերդ քու փառահեղ:

Դուն հեթանո՛ս գեղեցկութիւն, Նաւասարդեա՛ն Նաւակառիֆ,
Հին աստուածներ կեանքի կանչող հըմայաշունչ ձա՛յն գերակայ,
Դուն Հայ Անցեա՛լը մեր նորին ներդաշնակող ոսկի՛ դաշինք,
Դուն մեր լեզուն մինչեւ արփի՛ լուսավառող հրքի՛ն ներկայ...:

Մեծ Վարուժան, հրաշքն ես Հայուն, փա՛ռքը երգին եւ մըտածման,
Անմահութեան մեր ձգտումին, մեր երազին՝ վերածնութեան,
Մեր պատմութեան, մահու կենաց ուղիներուն անհանգըրուն,
Դուն հաննարե՛ղ խորհրդանիշ, պատգամախօս յաւերժաճայն:

Աւա՛ղ, աւա՛ղ... Ի՞նչպէս խօսիլ խողովոյումիդ նգնածամէն...
Եղեռնի այս «Յիսնամեակին»՝ Ի՞նչպէս ոգել սարսաղեցիկ
Յո՛ւշը... պատմել քու եւ Յեղիս զարիւրելի՛ գլխատումէն...
Բայց մեր խիղճով Դո՛ւք էք հիմա որ «Հայ Դատէն» մեզ կը խօսիք...:

ՄՍՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ